ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-18/26-IS/IMB

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

29 դեկտեմբերի 2025թ.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) Արսեն Արտաշեսի Առաքելյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգը» (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված 363 891 600 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրի նախահաշիվը կազմել առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N 2856-Ա/2 հրամանով ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությամբ,

2.4.4 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.6 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու ոչ նպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան (ամփոփիչ) հաշվետվություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը կազմում է 363 891 600 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե	Կազմակերպություն
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Օրբելի եղբայրների 22 Հ/հ՝ 900011033033 ՀԿՀՀ՝ 02704199 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	ՀՀ, Երևան, Է. Հասրաթյան 7 Հ/հ՝ 900018005273 ՀԿՀՀ՝ 00008732 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝
(ստորագրություն) Կ. Տ.	(ստորագրություն) Կ. Տ.
Կարեն Բորիսի Ղարիբյան	Արսեն Արտաշեսի Առաքելյան

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

Առաքելյան Արսեն Արտաշեսի

Հավելված N 1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-18/26-IS/IMB պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Արսեն Արտաշեսի Առաքելյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 դեկտեմբերի 2025թ. N 1-18/26-IS/IMB պայմանագրի գնի վերաբերյալ՝ 363 891 600 << դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

(ստորագրություն) Կ. Տ.

Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպություն

տնօրեն (ռեկտոր)՝

(ստորագրություն) Կ. Տ.

Արսեն Արտաշեսի Առաքելյան

Հավելված N 2
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-18/26-IS/IMB պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	40
Այլ պարբերականում հրապարակում՝	5
Գրքեր, մենագրություններ՝	1
Գիտաժողովի նյութեր՝	15

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Արսեն Արտաշեսի Առաքելյան

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ (ստորագրություն) Խաչատրյան Զարուհի Աշոտի

Կ. Տ.

Հավելված N 3
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-18/26-IS/IMB պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝(ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	324 526 596	64 905 319	81 131 649	81 131 649	97 357 979
2.	տնտեսական ծախսեր՝	34 950 000	6 990 000	8 737 500	8 737 500	10 485 000
3.	այլ ծախսեր՝	4 415 004	883 000	1 103 751	1 103 751	1 324 502
Ընդամենը՝		363 891 600	72 778 319	90 972 900	90 972 900	109 167 481

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Արսեն Արտաշեսի Առաքելյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Լիլիթ Մուշեղի Մելքոնյան

Կ. S.

Հավելված N 3.1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-18/26-IS/IMB պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**34 950 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	15 500 000
2.	*գազի ծառայություն*	7 500 000
3.	*ջրամատակարարման ծառայություն*	650 000
4.	*կապի ծառայություն*	2 500 000
5.	*աղբահանություն*	800 000
6.	այլ տնտեսական ծախսեր	8 000 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**4 415 004**
1.	նյութեր և պարագաներ	1 800 000
2.	հոդվածների տպագրություն	1 057 574
3.	վերապատրաստում և գործուղում	1 557 430

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Արսեն Արտաշեսի Առաքելյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Լիլիթ Մուշեղի Մելքոնյան

Կ. Տ.

Հավելված N 5
«29» դեկտեմբերի 2025 թ.
N 1-18/26-IS/IMB պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Կենդանի օրգանիզմների ֆունկցիոնալ ու պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի ենթակառուցվածքի պահպանում: Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների պարզաբանում, պոպուլյացիաների գենոմի ուսումնասիրություն, բնական և սինթեզված ակտիվ նյութերի ազդեցության կենսաբանական էֆեկտների և մեխանիզմների հետազոտություն, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Շենքային պայմանների պահպանում և բարելավում, կոմունալ պայմանների ապահովում, կոմունալ վճարների ժամանակին կատարում: Բազային, դրամաշնորհային և թեմատիկ ֆինանսավորման ծրագրերի շրջանակում իրականացվող հետազոտությունների վարչարարական աջակցություն և աշխատանքային անհրաժեշտ պայմանների ապահովում:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Ենթակառուցվածքի պահպանման շրջանակներում նախատեսվում է ապահովել էլեկտրաէներգիայի, ջրի, ջեռուցման անխափան աշխատանքը, սարքերի աշխատանքային վիճակը, հետազոտությունների ամփոփման համար նվազագույն պարագաների և նյութերի ձեռքբերում՝ ընթացիկ հետազոտությունների և դրամաշնորհային ծրագրերի իրականացման նպատակով:

Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների պարզաբանման շրջանակներում նախատեսվող հետազոտական խնդիրներն են.

- Ուսումնասիրել և նկարագրել օստեոարթրիտով հիվանդների մոտ $CD206^-$ և $CD206^+$ սինովիալ մակրոֆագերի ֆունկցիոնալ դերը ֆիբրոզ և բորբոքային գործընթացներում:
- Ուսումնասիրել Kv2, Kv6, Kv8, KCNQ1 և KCNQ5 ենթամիավորներ պարունակող կալիումական անցուղիների հատկությունները, դրանց կոդավորող գեներում մարդու նյարդաբանական

հիվանդությունները պայմանավորող պաթոգեն տարբերակների ազդեցությունը անցուղիների կառուցվածքի և ֆունկցիայի վրա:

- Ուսումնասիրել մարդու և կենդանիների վիրուսների ատիպիկ ախտաբանությունը հյուսվածքային և մոլեկուլային մակարդակով, դրա կապը տիրոջ իմունային բջիջների պոպուլյացիաների փոփոխության և հիվանդության կլինիկական պատկերի հետ:
- Ուսումնասիրել նոր էկոհամակարգերի դերը նուկլեոցիտոպլազմիկ խոշոր ԴՆԹ վիրուսների (Megavirus, Marseillevirus) շրջանառության գործընթացում: Տարբեր էկոլոգիական խորշերում հսկա վիրուսների հայտնաբերում, գենոմային բնութագրում և ֆիլոգենետիկական վերլուծություն՝ պարզելու դրանց տարածվածությունը, գենետիկական բազմազանությունը և էվոլյուցիոն կապերը: Բացի այդ, կուսումնասիրվեն վիրուսների և դրանց տեր օրգանիզմների միջև փոխազդեցության մեխանիզմները՝ ներառյալ հնարավոր էկոլոգիական և կենսաբանական ազդեցությունները:
- Բացահայտել Հայաստանում տարածված բակտերիալ ծագման վարակիչ հիվանդությունների կլինիկական առումով առավել խնդրահարույց հարուցիչները, բնութագրել վիրուլենտության ներուժի, մոլեկուլային համաճարակաբանության և հակամանրէային դեղամիջոցների նկատմամբ կայունության մեխանիզմները՝ ամբողջական գենոմի վերլուծության հիման վրա: Շարունակվելու է Հայաստանում առավել տարածված բակտերիալ վարակների հարուցիչների և այլ երկրներում տարածված հարուցիչների ազգակցական կապերի ուսումնասիրությունը՝ ամբողջական գենոմների վերլուծությամբ: Կատարվելու է նշված հիվանդությունների Հայաստանում շրջանառվող հարուցիչների առկա հավաքածուների պահպանում և համալրում:
- Մշակել հակաբիոտիկների առկայությամբ բակտերիալ մաքուր կուլտուրաների և համայնքների շարունակական աճի փորձարարական մեթոդներ՝ միկրոբիոմային համայնքներում դինամիկ փոփոխությունների հետազոտությունների համար:
- Ուսումնասիրել իմունային բջիջների պուպուլյացիաների փոփոխության դինամիկան աուտոբորբոքային և աուտոիմունային հիվանդությունների և քաղցկեղների ժամանակ՝ առանձին բջիջների ՌՆԹ-սեքվենավորման տվյալների հիման վրա:

Պոպուլյացիաների գենոմի ուսումնասիրության շրջանակներում նախատեսվող հետազոտական խնդիրներն են.

- Շարունակել Արցախի վերին քարեդարյան Քարին Տակ քարանձավի 2018-2020 թվականների պեղումների ընթացքում հավաքագրված բրածո ոսկորներում պահպանված կենսաբանական մարկերների մոլեկուլային նույնականացման և վերլուծության աշխատանքները:
- Իրականացնել հնէաբանական պեղումներ Եղեգիս հնավայրում (Վայոց Ձոր)՝ բրածո մնացորդների հավաքածուն համալրելու և հետագա հետազոտությունների համար:

- Իրականացնել հայկական պոպուլյացիայում կոդավորող գենետիկական տարբերակների բազմազանության գնահատում՝ ամբողջական էքզոմի մակարդակով:
- Հավաքագրել Սյունիքի և Տավուշի մարզերի հին, լքված խաղողի այգիներում պահպանված սորտերը, դրանց համար ստեղծել ֆենոտիպային և գենետիկական անձնագրեր և համալրել ՀՀ և միջազգային տվյալների շտեմարանները:

Բնական և սինթեզված ակտիվ նյութերի ազդեցության կենսաբանական էֆեկտների և մեխանիզմների հետազոտության շրջանակներում նախատեսվող հետազոտական խնդիրներն են.

- Կենդանի բջիջների վիզուալիզացիայի համակարգի հիման վրա մշակել քիմիական միացությունների հակավիրուսային ակտիվության թեստավորման նոր մեթոդ, որը թույլ կտա թեստավորել միացություններն առավել կարճ ժամանակահատվածում:
- Շարունակել 14-3-3 սպիտակուցի և մի քանի թիրախ-սպիտակուցների կոմպլեքսագոյացման և դրա կարգավորման համակարգչային մոդելավորումը՝ օգտագործելով էֆեկտոր մոլեկուլների արհեստական բանականության վրա հիմնված լայնածավալ սքրինինգի մոտեցումները:
- Մշակել մարդու քաղցկեղային 3D կոմպլեքս բջջային մոդելներ՝ համալրված միկրոմիջավայրի բաղադրիչներով, որոնք կիրառվելու են տարբեր քիմիական միացությունների մոլեկուլագենետիկական ազդեցությունների հետազոտություններում:

Կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների շրջանակներում նախատեսվող հետազոտական խնդիրներն են.

- «Santé Arménie» հիմնադրամի հետ համատեղ կենսաբանական նմուշների բանկը համալրել արյան պլազմայի, բջիջների, ՌՆԹ և ԴՆԹ նմուշներով առկա կլինիկական հետազոտությունների ռեգիստրների շրջանակում:
- Հայ-Ռուսական համալսարանի «Գենոմի խմբագրման և 3-րդ սերնդի սեքվենավորման» ԳԿ-ի հետ համատեղ շարունակել պացիենտ-սպեցիֆիկ ցողունային բջիջների բանկի համալրումը նոր բջջային գծերով և մշակել CRISPR-CAS համակարգեր մոնոգենային հիվանդությունների համար պատասխանատու պաթոգեն գենետիկական տարբերակների շտկման համար:

Ներկայացված հիմնարար և կիրառական խնդիրների լուծման համար կիրառվելու են՝

- գենոմիկայի և տրանսկրիպտոմիկայի եղանակներ,
- բջջային կուլտուրաների տեխնոլոգիաներ,
- մոլեկուլաբջջային իմունաբանության մեթոդներ,
- տեղեկատվական կենսաբանության եղանակներ (կենսաինֆորմատիկա, կենսավիճակագրություն, մոլեկուլային մոդելավորում),
- մեքենայական ուսուցման և արհեստական բանականության մեթոդներ:

Ծրագրով նախատեսված հետազոտությունները հանդիսանում են ՀՀ ԳԱԱ ՄԿԻ-ում գործող գիտական միավորների ուղղություններին՝ մոլեկուլային կենսաբանություն, գենոմիկա,

իմունաբանություն, ռադիոկենսաբանություն, նյարդակենսաբանություն, բջջային կենսաբանություն և վիրուսաբանություն, մանրէաբանություն, կենսաինֆորմատիկա և մոլեկուլային մոդելավորում, կենսառեսուրսների պահպանում և կլիմայի փոփոխությանն ադապտացում, որոնք Հայաստանում գենոմային բժշկության, ֆարմայի, կենսատեխնոլոգիաների և գյուղատնտեսության ոլորտների զարգացման հիմնասյուներն են:

Այլ գործունեություն՝

- միջազգային և տեղական դրամաշնորհային նախագծերի ներկայացում,
- հոդվածների, դրամաշնորհային հայտերի փորձագիտական քննություն (peer-review),
- ՀՀ կառավարության գերատեսչությունների ներկայացրած նախագծերի ոլորտային փորձագիտական կարծիքի տրամադրում,
- երիտասարդ կադրերի մասնագիտական հմտությունների կատարելագործում և դասավանդում:

Ակնկալվող արդյունքները. աշխատանքային պայմանների ապահովում և բարելավում, որոնք թույլ կտան զբաղվել այլ ֆինանսական միջոցներով (տեղական և միջազգային դրամաշնորհներ, ծառայությունների մատուցում, դրամահավաքներ և այլն) իրականացվող գիտահետազոտական և գիտակրթական գործունեությամբ, իրականացված աշխատանքների արդյունքների տպագրություն գիտական հոդվածների տեսքով միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում:

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Արսեն Առաքելյան)
(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Արսեն Առաքելյան)
(ստորագրություն)

Հավելված N 6
«29» դեկտեմբերի 2025 թ.
N 1-18/26-IS/IMB պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Կենդանի օրգանիզմների ֆունկցիոնալ ու պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրի

հ/հ	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	Ենթակառուցվածքի պահպանում և բարելավում, ընթացիկ հետազոտություններ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում, «Կենդանի օրգանիզմների ֆունկցիոնալ ու պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	Վարչարարական, փորձարարական և տեսական, գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	1-ին եռամսյակ
2	Ենթակառուցվածքի պահպանում և բարելավում, ընթացիկ հետազոտություններ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում, «Կենդանի օրգանիզմների ֆունկցիոնալ ու պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	Վարչարարական, փորձարարական և տեսական, գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	2-րդ եռամսյակ
3	Ենթակառուցվածքի պահպանում և բարելավում, ընթացիկ հետազոտություններ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում, «Կենդանի օրգանիզմների	Վարչարարական, փորձարարական և տեսական, գիտակրթական աշխատանք, տվյալների	3-րդ եռամսյակ

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:*

		ֆունկցիոնալ ու պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	
4	Ենթակառուցվածքի պահպանում և բարելավում, ընթացիկ հետազոտություններ, տարեկան հաշվետվության ներկայացում	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում, «Կենդանի օրգանիզմների ֆունկցիոնալ ու պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	Վարչարարական, փորձարարական և տեսական, գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում, տարեկան հաշվետվության ներկայացում	4-րդ եռամսյակ

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Արսեն Առաքելյան)
(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Արսեն Առաքելյան)
(ստորագրություն)